

եաւ, բայց որդին կորստեան (Յովհ. ԺԷ, 12)։

Սիրելի հաւատացեալներ, մեր ձեզ հաղորդած ճշմարտութիւնները շատ նշանաւոր են. քննեցէք նոցա և ըմբռնեցէք ժամանակի, մարդկային կեանքի ոգին։ Մենք ձեզ ժամանակի ամեն չար հոգիներից զգուշացրած, յորդորել ենք հաւատարիմ մնալ Յիսուսի Քրիստոսի հոգուն։ Մեզանից իւրաքանչիւրն կարող է Մովսէսի հետ բացագանչել։ Աւերիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր. զկեանս և զմահ կտու առաջի երեսաց ձերոց, զօրհնութիւնս և զանէծս, և ընտրեալ զկեանս, զի կեցցես դու և զաւակքո. սիրելի զՏէր Աստուած քո և լսել ձայնի նորա և ունել զնմանէ։ (Բ. Օրէնք Լ. 19, 20)։

(Թարգմ.) Ս. Տէր Գարրիէլեանց։

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ։

(Շ-Է-Ն-Դ-Է-Դ-Է-Դ, Ա-Է-Է-Է-Է-Է-Է, Բ. Լ.)

Ե.

Եթէ որ իւրաքանչիւր աշակերտին բաժին ընկնող լուսոյ քանակութիւնը շատ մեծ գեր է խաղում, ներգործելով մանուկի տեսութեան վերայ, ուրեմն և աւելի մեծ ու նշանաւոր գեր է կատարում օգի այն քանակութիւնը, որ բաժին է հասնում դասատան մէջ մէն մի աշակերտին։ Օգի այդ քանակութիւնը պայմանաւորվում է դասատանց չափով։ Դասատան սենեակի մեծութիւնը, ասում է Փարենտրապպը, պայմանաւորվում է աշակերտների թուով, նոցա հաճակին համեմատ բռնած տեղի մեծութեամբ, սեղանների առջևի և յետևի դասարկ տեղի քանակութեամբ, ամբիոնի, գրատախտակների և ժառարանի բռնած տարածութեամբ։ Բայց դասատան երկայնութեան և լայնութեան չափը իմանալով, մենք պէտք է նաև ուշադրութիւն դարձնենք դասատան բարձրութեան վերայ, որովհետեւ ցածր սենեակը անողջարար սենեակ չի կարող լինիլ։ Դասատան սենեակը չբազմաբան է չափազանց մեծ լինի, այլապէս մի կողմից վերջին սեղանների վերայ նստած աշակերտները լոււ չեն որոշիլ գրատախտակի վերայ նկարած կամ գծադրած ձևերը, բառերը և թուանշանները, իսկ միւս կողմից, պատուհանների հանգէպը նստող աշակերտները միւս աշակերտների լուսոյ առաջը ծածկելուց անբաւարար քանակութեամբ լոյս կառնուն։ Բացի դրանից չափազանց մեծ սենեակը դժուարացնում է ուսուցչի գործը աշակերտաց վերայ հսկողութիւն ունենալու գործում, իսկ վերջին սեղանների վերայ նրստող աշակերտներն էլ նեղանում են ուսուցչի հարցերին չափազանց բարձր կերպով պատասխանելու կարեւորութիւնից։ Այս կերպով դասատան սենեակի մեծութեան հարցը բաւականին բաղադրեալ է։ Չնայելով այս առարկայի վերաբերութեամբ արած բազմաթիւ հետազօտութեանց, մինչև այսօր բժիշկները դպրոցական սենեակների որոշ չափի մասին մի ճիշդ եզրակացու-

Թեան չեն եկած, ինչպէս և ճիշտ եղբայրացութեան հասած չեն ո՛չ նորա և ո՛չ մանկավարժները այն թուի որոշման առթիւ՝ ինչ թուով աշակերտներ կարող էին թոյլ տրուիլ մի դասատան մէջ, Փարենտրապպը նկատում է, թէ քաղաքական գպրոցներում, բեալական ուսումնարանում և գեմնադիաներում 50 աշակերտից աւելի չի կարելի թոյլ տալ մէն մի դասատան մէջ, որ գէպքում և բարձր դասատանց մէջ աշակերտների թիւը 40ից և մինչև անգամ 30ից աւելի չըպէտքէ լինի։ Զնայելով որ այս բոլոր պահանջները շատ չափաւոր են, որ ուսուցչի համար շատ հեշտ չէ 50 աշակերտի հետ պարապելը, որ 50 աշակերտներով լի սենեակից դժուար է սպասել առողջութեան համար բաւարարիչ հետեանքներ, չնայելով, ասում ենք, այս բոլորին՝ իրականութեան մէջ աշակերտաց այդ թուիցն էլ շատ անգամ աւելի աշակերտներ ենք տեսնում դասատանց մէջ, Բերլինի մի քանի ծխական գպրոցներում մենք գտնում ենք դասատան մէջ 104—106 աշակերտ, միջնակարգ և տարրական գպրոցներում, նոյնպէս Բերլինում մենք տեսնում ենք դասատան մէջ 85-ական աշակերտ, նոյն քաղաքի գիմնադիայում մենք գտնում ենք դասատան մէջ 59—67 աշակերտ։ Վազանի բժիշկների հետազօտած գպրոցի երկրորդ դասատան մէջ կար 52 աշակերտ, երրորդում 50 աշ. և ին, Իւրաքանչիւք աշակերտ քսա իւր հասակի՝ սեղանի վերայ պէտք է մի որոշեալ տեղով տարածութիւն բռնի, ստորին դասատանց աշակերտների համար Փարենտրապպը այդ տարածութեան չափը որոշում է 3, քառ. ոտն, իսկ բարձր դասատանց աշակերտների համար 5, քառ. ոտն։ Հաշուելով սեղանների միջոցների հետաւորութիւնը՝ ամբիոնի բռնած տեղի, վառարանի և սոցա նժան այլ առարկաների տարածութիւնը՝ նա համարում է ամեն մի աշակերտի համար առ նուազն 14 քառ. ոտն տարածութիւն, այն ինչ Հեսսենեան մեծ դ.քսութեան մէջ՝ օրինակ 1830 թուականներին իւրաքանչիւք աշակերտի համար պահանջվում էր ոչ աւելի, քան 4. քառ. ոտն, տարածութիւն, իսկ նոր ժամանակներում Մօնֆալիօնը և Վերնուան ամեն մի աշակերտի համար պահանջում են 27 քառ. ոտն, Բայց մինչև անգամ Փարենտրապպի համեստ պահանջն ընդունելով, գպրոցներից շատերում մենք ամեն մի աշակերտին ընկնող տարածութեան մէջ սակաւութիւն կնշմարենք, այսպէս օրինակ Վազանի բժիշկների հետազօտութիւնից երեւում է, որ նոցա տեսած գպրոցի մի դասատունը իւրաքանչիւք աշակերտի բաժին էր հասցնում 14 քառ. ոտն աչափից աւելի տարածութիւն, իսկ միւսը 14 քառ. ոտն, այն ինչ մնացեալ դասատուները տալիս էին երբեմն աշակերտաց ոչ աւելի՝ քան 9, և մինչև անգամ 7, քառ. ոտն, տարածութիւն։ Նոյնը կարելի է ասել և Նախասենեակների համար, նկատում է Պ. Ըշչերրակովը, որք չափազանց նեղ են, Այսպէս երկրորդ յարկում Նախասենեակի լայնութիւնն է 6 ոտն, 10 մատն, իսկ առաջինում միայն 4 ոտն, 5 մատն, մինչդեռ գպրոցների Նախասենեակները 8 կամ 11 ոտնաչափից նեղ չափտի լինին, Մանաւանդ մեղանում այդ նեղ Նախասենեակները այնքան ցանկալի բանէր չեն, որովհետեւ ձմեռ ժամանակ նորա միակ տեղն

են կազմում, որ դասավորուցներին կարող են ման գալ ուսանողները, և Աւելի ցաւալի եղբայրացութիւններ էին ստացում Վաղանի ստորին ուսումնարանների հասարակութիւնից: Այստեղ պատահում էին դէպքեր, որ դասատան մէջ ամեն մի աշակերտի լինում էր ոչ աւելի 8, քան ուն. 8 քան. ուն. 7, քան. ուն. 6, քան. ուն. և մինչև անգամ 4, քան. ուն. տարածութիւն:

Երբ որ քառակուսի տարածութիւնը պակաս է լինում, աշակերտները չեն կարողանում ազատ շարժուիլ և անդադար հըռում են միմեանց նստարանների վերայ, որովհետեւ ամեն միւր նոցանից աշխատում է գրելիս աւելի յարմար գրութեամբ նստել և չճնշուել մօտի նստողից: Բայց էլի լաւ է, և թէ որ քառակուսի տարածութեան պակասութեան շնորհիւ խորանարդ տարածութիւնը աւելանում է, և կարելի է անում ազատ կերպով մաքուր օդ շնչել: Իսկ ժողովրդաբար ընդհանրապէս է պատահում, փոքրիկ սենեակները ըստ մեծի մասին լինում են մի և նոյն ժամանակ և ներք, որից և աշակերտի առողջութիւնը վտանգի է ենթարկվում: որովհետեւ մարդու շնչելու համար հարկաւոր է լինում որոշեալ քանակութեամբ օդ:

Ամենից առաջ մենք այստեղ ուշադրութիւն պէտք է դարձնենք շնչառութեան գործողութեան, և նորանով պայմանաւորուած՝ մեզ պատող օդի փոփոխութեան վերայ:

Այս հարցը գեղեցիկ կերպով մշակել է Պետտենկոֆերը: Նորա հաշուելով 100 մասի մէջ պարունակվում է:

Մաքուր օդի մէջ	79,3, մասն բորոկածին
	20,7, թթուածին
	0,1, ածխային թթվուտ
Արտաշնչած օդի մէջ	79,3, բորոկածին
	16,7, թթուածին
	4,1, ածխային թթվուտ

Օդի ապականութիւնը աւելի սաստկանում է այն նեխեալ մասերից, որք կազմվում են ածխային թթվուտից, ամօնիակից և ջրից: Պետտենկոֆերի խօսքերով 50 գրվանքայ կշռող մանուկը յաճախացած շնչառութիւնից մի ժամում արտաշնչում է համարեա այնքան ածխային թթվուտ, որքան և 100 գրվ. կշռող հասակաւոր մարդը: Շնչառութիւնից անպիտանացած օդի վերնաստիար ազդեցութիւնը պայմանաւորվում է ոչ միայն ածխային թթվուտի առաւելանալու քանակութեամբ, այլև գլխաւորապէս այն գործարանական նիւթերով, որք բաժանվում են թոքային և մաշկային շնչառութեանց ու տալիս են անպիտանացած օդին անհաճոյ նեխեալ հոտ: Թէև ածխային թթվուտն էլ շատ վատ ներգործութիւն է անում և Լեյքէնը, օրինակի համար, կարող էր մի քանի րոպէ միայն մնալ $\frac{3}{4}$ ածխային թթվուտ պարունակող օդի մէջ: Մարդու համար անփութանացած օդի փնտրակարութիւնը շատ յայտնի է: Աննշան քանակութեամբ անպիտանացած օդը չի ներգործում ուղղապէս ինչպէս թոյնը, նա որոշեալ հիւանդութեան առիթ չի լինում, բայց խան-

գարում է նիւթերի փոխանակութիւնը և մարդուս կազմուածքի մէջ նշանաւոր չափով պակսեցնում է այն ընդունակութիւնը, որով կարող էր նա ուրիշ վնասակար ներդործութեանց առաջն առնել։ Ապացուցւած է, որ զօրանոցներում և բանտերում տեղի ունեցած հիւանդութեանց և մահուան բաղմամբիւ դէպքերի պատճառն է գլխաւորապէս այն տեղերի ապականեալ օդը, որտեղ մարդոց բաղմութիւնը չափեց դուրս շատ է։ Այստեղերում պատահող մահուան դէպքերը պակասում են նոցա մէջ բնակողների պակասելով։ Այս միւնսյնը նկատւում է հիւանդանոցներում և այս հիման վերայ վերջին ժամանակներս աշխատում են ահագին հիւանդանոցների շինութիւնները փոխարկել թեթեւ վրանների և տաղաւարների։ Մարդոց խոնուած չափազանց մեծ բաղմութիւնից ևս կախումն ունէին և այն մահուան դէպքերը, որք պատահում էին սարուկների նաւերի վերայ։ Անպիտանացեալ օդի ներդործութիւնից 1755 թուին սե քարանձաւում, Լաֆօրայի մէջ 146 դերեալներից երեկոյեան 9 ժամից մինչև առաւօտեան 5 ժամը մեռան մօտ 123 մարդ։ Անտառնեկոփերը անպիտանացած է համարում արդէն այն օդը, որի մէջ 10,000 մասի վերայ գալիս է 10 մասն ածխային թթվուտ, իսկ մաքուր օդ այն օդն է համարում, որի մէջ օդի 10,000 մասին բաժին է ընկնում ո՛չ աւելի քան 6 կամ 7 մասն ածխային թթվուտ։ Արեւմտ օրքան արդեօք մեծ պէտքէ լինի սենեակի խորանարդ տարածութիւնը, որ կարող չլինի վնասել առողջութեանը։ Ահարկէ չէ կարելի դասատան համար կառուցանել այնպիսի մեծութեամբ մի սենեակ, որ քանի մի ժամ շարունակ աշակերտները առանց արհեստական օդափոխութեան՝ կարողանային բաւականաւ թարմ օդ շնչելով։ Բայց նոյնպէս էլ չի կարելի դասատանց համար այնպիսի սենեակներ կառուցանել, որոց մէջ մինչև անգամ արհեստական օդափոխութեան ժամանակ, լաւ օդ չի կարող լինել։ Անտառնեկոփերը ընդունում է, որ մի յայտնի սահմանափակ տարածութեան մէջ օդը շնչառութեան պիտանացու լինելու համար, պէտքէ որ ժամանակի մի յայտնի միութեան մէջ ձեռք բերուող օդի քանակութիւնը այնքան շատ լինի նոյնչափ ժամանակամիջոցի մէջ արտաշնչած օդի քանակութիւնից, որքան որ արտաշնչած օդի ածխային թթվուտի բովանդակութիւնը մեծ է աղատ օդի և դեռ շնչառութեան համար պիտանացու օդի ածխային թթվուտի բովանդակութեան տարբերութիւնից։ Բոկտօր Աշչերբակովը այս կանոնի հիման վերայ իւր հաշիւն անելով համարում է, որ իւրաքանչիւր աշակերտին հասնող տարածութիւնը առ նուազն հաւասար պէտէ լինի 500 իւր. ուն։ Բայց ի՞նչ տեսաւ արդեօք նա՞ իւր։ Ասողանում տեսած դպրոցում։ Նա գտաւ, որ դպրոցի շինութիւնը բոլորովին համապատասխան չէ առողջապահութեան կանոններին, նա շատ նեղուածք է, որովհետեւ այդտեղ եղած շեղած օդի ամենաշատ քանակութիւնը 2 անգամ պակաս էր պահանջուած քանակութիւնից։ Նա ստում է, թէ մինչև անգամ եթէ կարելի լինէր՝ դպրոցի մէջ ոչնչացնել բոլոր նախասենեակները, ընդունարանները, ֆիզիքական գործիքների առանձնասենեակը և դրող սրանք ու այդպիսով բոլոր շինութիւնը

բաժանել դասատանց 7 սենեակների, այն ժամանակ ևս դպրոցը չատ և չատ նեղուածք կլինէր, նա մինչև անգամ կարծուէր, որ տեղի նեղութիւնը եղել է այն պատճառներից մինը, որով չատ և չատ աշակերտներ առանց դպրոցի մէջ ուսման ընթացքը աւարտելու, դուրս են եկած, Խորանարդ տարածութեան մի և նոյն պակասութիւնը տեսել են Աաղանի բժիշկները և իրանց հետազօտած ուրիշ ստորին դպրոցներում, Բայց ոչ միայն Աաղանում, այլ և ամենայն տեղ դպրոցները զուրկ չեն խորանարդ տարածութեան պակասութիւնից, Այլ և պէտքէ ասել, որ ամենայն տեղ երևում է արհեստական օդափոխութեան անբաւականութիւն, այնպէս որ, օդը չի կարող նորոգուիլ և մաքրուիլ, Աւրեմն ակնյայտ է, որ շնչառութեան պիտանացութարրերի ժողովումն դասատանց մէջ բաւական նշանաւոր է լինում և չի կարող վնասակար կերպով չներգործել մանկանց առողջութեան վերայ:

Օրտելի, Պետտենկօֆերի, Բերինգի, Լանդի և Քոսկօի հետազօտութեամբ դպրոցը չատ յետ է մնում զինուորանոցներից, պանդոկներից, մշակութեան տեղերից և մինչև անգամ ոստիկանարանի բանտարկեալների համար կառուցած բնակարաններից, Միայն ախոռն է, որ մի քիչ աւելի վատ օդ է նկարու նակում, քան դպրոցը, Այդ հետազօտութեանց արդիւնքները չատ հետաքրքրական են և մենք արտագրում ենք Պարիստրապպից նոցանից (մի քանիսը:

Ածխային թթվուտի քանակութիւնը 10,000 մաս օդի մէջ հետեւեալն է. —

- 1) Ցերեկը մասնաւոր սենեակում 5, (մաս)
- 2) Մինչև 7) մասնաւոր սենեակում, նորա մէջ 6, (մինչև 8, չատ ժամեր անցկացնելուց յետոյ 6, (մինչև 8, Մասնաւոր սենեակում, նորա մէջ չատ ժամեր անցկացնելուց յետոյ, միջին թուով 6, (մինչև 8, 8) Գիշերը ննջարանում՝ պատուհանի փակուած ժամանակ 23, (մինչև 24, 9) Գիշերը ննջարանում՝ պատուհանի բաց ժամանակ 8, (մինչև 9, 10) Օդափոխութեամբ լաւ չթարմացած արհեստանոցում 19, (մինչև 20, 11) 46,000 ոտն. խոր. տարածութիւն ունեցող Լիբիխի լսարանում երկու ժամ տեղը ընթերցումից յետոյ 300 ունկնդիրների ներկայութեամբ 32, (մինչև 33, 12) 6,000 ոտն. խոր. տարածութեամբ գինեւան մէջ 21 անձանց ներկայութեամբ երկու ժամից յետոյ 38, (մինչև 39, 13) 6,000 ոտն. խոր. տարածութեամբ գինեւան մէջ, մասամբ ծխող 20 անձանց ներկայութեամբ, երկու ժամից յետոյ 49, (մինչև 50,

- 14) 10 000 ոտն խոր տարածութեամբ դասատան մէջ 9 ից մինչև 10 տարեկան 70 աշակերտների ներկայութեամբ 2 ժամ տևող դաս/ըց յետոյ 72
- 15) Հինգ արհեստական կերպով օդափոխած դասատներում 11 մինչև 15
- 16) Հինգ օդափոխած դասատներում 23 մինչև 49
- 17) Հասարակաց հիւանդանոցում Փետրվար և Ապրիլ ամիսներում 23 և 14
- 18) Ծննդատան մէջ 22
- 19) Պատիկանարանի քանտարկեալների տե- նեկում Ապրիլի սկզբին և վերջին 33 և 21
- 20) Արհեստանոցում Յուլիսի սկզբին և վերջին 13 և 18
- 21) Զինուորանոցներում Սեպտեմբերին 27
- 22) Զինուորանոցներում Հոկտեմբերին 36 և 43
- 23) Զինուորանոցներում Նոյեմբերին 49
- 24) Բանտում և Փանտարաններէ շինու- թեանց մէջ 31 և 53
- 25) Ժողովրդականաց դպրոցում Մարտին և Յուլիսին 57 և 41
- 26) Վիլհելմի Գիմնազիայում Մարտին և Յուլիսին 55 և 22
- 27) Օրիորդաց դպրոցում Յուլիսին 20
- 28) Գիմնազիայի զանազան դասատներ- րում Յելլի մէջ 20 մինչև 50
- 29) Ժողովրդական դպրոցների շատ դա- սատներում Յելլի մէջ 90
- 30) Ժողովրդական դպրոցի մէկ դասա- տան մէջ 120
- 31) Միջակ օդափոխ եղած դասատան մէջ երկու ժամից յետոյ 34
- 32) Զինուորանոցի վատ օդափոխուած ննջարաններում առաւօտը 97
- 33) Անգղիական զինուորական հիւան- դանոցներում 6 մինչև 18
- 34) Օդը չփոխած Անգղիական զինուո- րանոցներում 11 մինչև 19
- 35) Սալպիտրիների շատ լցուած ննջա- րաններում 41 մինչև 50
- 36) Անգղիական դպրոցական սենեակ-

Ներում

23 մինչև 31

Այսպէս ահա, ժողովրդական դպրոցը բոլոր շինութեանց մէջ աչքի է ընկնում իւր վատ օգով: Բայց այդ դպրոցում ուսանում են մանուկներ, այդ՝ — հասարակութեան ապագայ անդամներն ու մշակները: Նոցա կազմուածքը դեռ ևս թոյլ է և նոքա չափազանց գծուարանում են անպիտանացած օգնչելիս: Եւ դպրոցի այդ վատ կազմակերպութիւնը տիրան կորստեան պատճառ պէտք է լինի նոցա համար, որ կարող է թունաւորել նոցա առողջութիւնն ամենայն արհեստանոցից, ամեն գործարաններից և ամեն մասանից էլ աւելի: Այս մասին շատ փոքր են մտածել դպրոցներ կանգնողները. այդ իսկ պատճառով էլ կան այժմ մի խումբ դպրոցներ, որք պիտացացու են քանգուելու միայն, լիակատար կերպով ոչնչանալու, ապա թէ ոչ դոքա նշանաւոր կերպով կթունաւորեն գալոց սերնդի առողջութիւնը, որ առանց այն էլ վտանգվում է մասանների, խուցերի և գործարանների մէջ և վերջապէս մեր մանկանոցներում: Այս մենք հասարակութեան միջին դասի մարդիկ ենք, մեծ հոգացողութեամբ կառուցանում ենք մեր ընդունարանները, դահլիճները և ստանձնասենակները, բայց մեր մանուկների սենեակները, ո՛հ, նոցա մասին մենք շատ քիչ ենք մտածում: Թէև բարեբաղտարար մենք չենք ժողովում մանուկներին մեր ննջարաններում, որտեղ մենք քնում ենք մեր կանանց հետ, բայց այնու ամենայնիւ մեր բոլոր քնակարանից ընտրում ենք ամենափոքր սենեակը և դոքա մէջ տեղաւորում ենք այլ և այլ հասակի տէր երեք չորս մանուկ դայեակի հետ իմիասին, երբեմն մինչև անգամ տեղ ենք տալիս այնտեղ և էժանագին մանկաբարձին կամ ստընտուին: Այստեղ յաճախ անկողնակալների տակ շաքաթներով ընկած է լինում կեղտոտ սպիտակեղէններ. երբեմն ապէս այստեղ չորացնում են մի ոք և կտաւիք: Մայրերը ամենայն օր չեն տեսնում ու չեն մտնում մանկանոցները, նոցա անգամ հոգը չէ, թէ մի օր և տեղ անկողնակալի տակ ընկած է կեղտոտ սպիտակեղէն, որ ծածկուած է մինչև յատակը հասնող գեղեցիկ սպիտակ վերմակով և եթէ վերջապէս մանկանոցի մաքրութիւնը լինում է ըստ երևութին, թէ այստեղի օդը փոքրիշատէ շնչել կարալի է միայն ցերեկը, և ոչ թէ գիշերը, թէ այդպիսի օգնչող մանուկները առողջ մանուկներ չեն կարող լինիլ: Բայց այնուամենայնիւ մեր կանայք, մեր որդւոց մայրերը իսկ և իսկ վարվում են այսպէս և ոչ այլապէս. նոքա չեն ուզում, չեն կարողանում հասկանալ, որ զրկելով մանկան կազմուածքը նոքա մի օր և է անհրաժեշտ պիտոյքից, նոքա կատարում են շուտափոյթ թունաւորութիւն, արագահաս մահ: Եթէ նոքա աւելի շատ խորհէին, եթէ միայն նոքա աւելի խորը և աւելի զգուշաբար նայէին կեանքի վերայ, նոքա կհասկանային իրեանց կատարելիք դերի բոլոր մեծութիւնն ու ծանրութիւնը և սարսափով կըշեղէին նոքա իրանց բռնած ընթացքը և կըվերականգնէին ուղիղ ճանաչապարհի վերայ:

(ԿԸԶԵՆՆԱԼՈՒՄ)

(Թարգմ.) Մ. Տ. Սարգսեանց.